



Միսաք Մեծարեւոյ

Նոր տարին

Այս գիշեր հագուած, սգուած նոր տարին
Առտուան լոյսին կըսպասէ տենդոտ.
Ոգիներ անդարձ կորցեցին տարի՛ն
Մեր գրկէն հինին ձայները ծանօթ:

Նոր տարւոյ ընծայ պայծառ լուսինկան
Սագեր է գիւղին լեռները բոլոր.
Երգերը ծերին, ճիշերը մանկան
Կ'արձագանգեն թունդ խաղերով մոլոր:

Իդներու շարք մը պլլուած սրտին՝
Վառ յոյզերու մէջ կ'օրրէ գայն ուժգին.
Բորբոքած հուրքովն յոյզերու անշէջ
Կը ծփան սիրտերն ըղձանքներու մէջ:

Գիշերուայ վերջին պահերուն լոին
Ձայներն ու լոյսեր յանկարծ կը մարին.
Եւ բեհեզներովն կապոյտ կամարին
Պճնրած աշխարհ կու գայ նոր տարին:

1902, Դեկտեմբեր